

ՔԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՈՒՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ (ԴՕՔ-
ՏԱՐԻ) ԱՍՏԻՃԱՆ ԱՄԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Գ-Ղ-Ա-Ճ-Կ Ե-Ր-Գ-Ա-Ն-Բ-Ի-Ն Ռ-Ա-Վ-Ե-Ր
Գ Օ Լ Օ Ս (Զ - Ա լ) Ե - Ր - Գ - Ի - Ն :

“ Պետրքուրդի Համալսարանի և
Ակադեմիայի Եկեղեցական Պատմու-
թեան ուսուցիչ Պ. Ի. Տրյոլիցի, Ապ-
րիլ 27-ի, Կիրակի օրն, Ակադեմիայի
մէջ պաշտպանեց վարդապետութեան
աստիճան ստանալու համար գրած խոր-
քննական աշխատասկզբութիւնն, որ
ունէր այսպիսի վերնագիր . “ Բայցար-
ը-ին- բառ- բառ- բառ- Հայուստանեաց Եկե-
ղեց- ս, ու Գրեաց Ներեւու Շնորհակը ՚
ին- տրը կի- Սահուել Կայսեր Յունաց : —
Պատմուկան և Հայուստանեական հետալուր-ին-
յալ- Գոյց- յանելու ըստեղեն Հայու ըն-
Եկեղեց- յա Ռուսաց ” :

Ասառւածաբանութեան վարդապետի ասաիմանի հետամուտ հեղինակն իւր գրուածքի ներածութեան մէջ ցոյց տալով Հայոց Եկեղեցւոյ Ռուսականին հետ միացնելու միջոցներն , որոնք իրարմէ կը տարբերին ոչ միայն ծիսիւ , այլ եւ վարապետութեամբ , յառաջ բերաւ ինչ ինչ տեսական վարդապետութիւններ և չանաց բացատրել Հայոց Եկեղեցւոյ խոտորման պատճառներն ՈՌուսականին և միահազոր հնարքներն :

Հայաստան լինելով երկու հզօր
տէրութեանց մէջ - Յունականին եւ
Պարսկականին - մեծ նշանակութիւն
ունէր իւր Եկեղեցւոյ բաժանումն
Յունականէն : Հայաստան պաշտպա-
նելով իւր կրօնական շահն ընդդէմ
այլակրօն Պարսից, մի և նոյն ժամանակ
պարտաւորուած էր պաշտպանել իւր

ազգային շահն ընդդէմ Բիւղանդիաւ
կան կայսերութեան . Հայատան չը
կամենալով քաղաքականապէս հպա-
տակիլ Բիւղանդիսի ազգեցութեն , բո-
զոք յարոց նորա դէմ ըստ կրօնակա-
նին և խոտորեցաւ ՚ի կողմն միաբնա-
կաց , որք հալածանք կը կրէին Բիւղան-
դիսի մէջ : Ահա այս պատճառաւ , որ-
չափ որ փորձ փորձուեցաւ Հայոց Եկե-
ղեցին Յունականին հետ միայնել , ա-
մեն փորձեր ՚ի դերեւ ելին , որովհե-
տեւ ազգային և քաղաքական շահերն
միշտ կրօնականին հետ կը խառնուէին :

Այս աղքայինն և քաղաքական դր-
ժուարութեանց բարձումէն կախեալ
է միութեան գործոցն յաջող կատարա-
ծըն : Եւ ահա Հայոց Եկեղեցին Ռու-
սականին հետ միտցնելու համար պէտք
է աղքայինն և ժողովրդայինն թողուլ
և լոկ եկեղեցական խնդիր նկատել :
Աւելի լաւ կը լինի այն կէտին հասցը-
նել խնդիրն , որ Հայք ճանաչելով
Ռուսական ուղղափառութենէն խո-
տորելու նշանակութիւնն և վեասն ,
ինքնին կարօտին և ստիպուին միանա-
լու , առանց արտաքին աղքեցու-
թեանց :

Վարդապէտութեան աստիճանի
հետամուտ հեղինակի սոյն խօսքերուն
նկատմամբ գիտողաւթիւններ եղան ի-
սիդօր Մետրապօլիտի կողմէն, որ կը
նախագահէր քննական մրցման ատե-
նին :

Տրցիցկու պաշտօնական քննիչներէն կամ ընդդիմաբաներէն առաջինն Պ. Զելյով, գրուածքին երկրորդ մասըն ընդունեց իբրեւ ամենայն մասամբ կատարեալ, ուր յառաւած քերուած էին այնպիսի պատմական յիշատակարաններ, որոնք իբրեւ ձեռագիր անձանոթ մնացած էին Մոսկուայի Արօնդական մատենադարանին մէջ՝ իսկ առաջին մասին համար Պ. Զել-

ցով շայտնեց, որ արեւմտեան դիս-
նականաց ազգեցութեամբ և հետեւո-
գութեամբ գրուած է, այն է Նորվե-
գացի Կասպարի և Գերմանացի Բառ-
րի, որոց սխալներն կրինուած են Տը-
րոյիցիու աշխատասիրութեան մէջ։
Օրինակի համոր, ինչպէս Կասպարի,
նոյնպէս և Տրոյիցի Հայոց Հաւատոց
Հանգանակն, զօր Ռուսերէն թարգ-
մանած է Յովակի Արքեպիսկոպոսն,
Նիկղական չեն ընդունիր, իբրև գործ
Մէծին Ամեանասի, այլ կը համարին
իբրեւ Նիկղականին վերաց յերիւր-
ուած բան մի։ Սակայն սխալ է ոյս
կարծիքն, վասն վե Հայոց Հանգանա-
կըն այնչոփ Նիկղական է, որչափ եւ
Ռուսացն, ՚ի բաց առեալ միաբնու-
թեան տարրն։ Մանաւանդ որ Նի-
կղական Հանգանակ ասելով ոչ թէ այն
կ՚իմացուի, զօր կարդացին և ստորագ-
րեցին Հարք առաջին տիեզերական
ժողովց (որ է Հանգանակ Կեսարիոց
եկեղեցւոյն) այլ կ՚իմացուի ամեն Հան-
գանակ, որ կազմուած է Նիկղական
Հանգանակի հոգւով և որ համաձայն
է առաջին տիեզերական ժողովց վար-
դապետական ուսման։ Կասպարի կար-
ծիքն սխալ է նուև Հայոց Հանգանակի
ծագման Ժամանակին նկատմամբ։

Պ. Զելցով բոլորովին դիւանական
և բառական գտաւ Պ. Տրոյիցիու հա-
մեմատական աշխատութիւնն, որով
բազգատած և իրար խառնած էր զա-
նազան Հանգանակներն։ Իսկ յերկոշ
բնութեանց և յերկոշ բնութեան խօսքերն,
զօր հոմիմաստ բացատրած էր Տրոյիցիի,
հերքեց Պ. Զելցով, յայտնելով որ
նոյնիմաստ չեն, ինչպէս որ Հայք եւս
առաջինն կ՚ընդունին, բայց երկրորդն՝
ոչ, հարկաւ տարբերութիւն նշնարե-
լով։

Պ. Զելցով ընդդէմ Տրոյիցիու՝
երկարօրէն բացատրեց նմանապէս, որ

միաբնութեան հերետիկուութիւնն
Եւտիքեսէն չէ սկսուած, այլ առա-
ջուց, քանզի հերետիկուութիւններն
գարերով կը շարունակին և ասդա ձեւ
կ՚լատանուն, Եւտիքեսի ժամանակ մի-
այն ձեւ ստացաւ նոյն հերետիկուու-
թիւնն և ոչ թէ նոր սկսաւ։

Պ. Տրոյիցիի ընդդէմ Զելցովի ջա-
նաց պաշտպանել իւր գրուածքի ա-
ռաջին մասն, յայտնելով որ ամենէն
շատ զայն մշակած է և երբէք ենթար-
կուած չէ Արքեւելեան դիսնականաց
ազգեցութեան։

Պ. Զելցով նկատողութեան առնը-
լով Պ. Տրոյիցիու գրուածքի երկրորդ
մասն՝ յայտնեց թէ՝ Հայոց Եկեղեցին
Ուուսականին հետ միացնելու համոր
ամենեւին հարկ չը կաց Հայերն հրա-
ւերել, որ համաձայնին վարդապետու-
թեամբ և ծիսիւ, Քրիստոնէութեան
մէջ առաջին պայմանն է հոգւով և
ճշմարտութեամբ երկրորդութիւնն։
իսկ ծէնն ամենեւին կարեւորու-
թիւն չունի, այլ կարողէ փոփոխիլ
՚ի զանազան ժամանակս և ՚ի տեղիս ։
Եւ երբ Պ. Տրոյիցիի պատասխանեց
թէ Հայոց ծէսերն սերտ կապակցու-
թիւն ունին իրենց սխալ վարդապե-
տութեան հետ և գրեթէ իրենց վար-
դապետական մոլորութեանց ցոլմունք-
ներն են, Պ. Զելցով զիտեց, թէ բա-
զումք ՚ի Հայոց՝ վարդապետական ու-
սումներն ամենեւին չեն միացներ ծե-
սից եւ արարողութեանց հետ։ Իւր
խօսքն հաստատելու համար, ՚ի միջի
այլոց, յառաջ բերաւ՝ թէ Հայք ա-
ռանձին չեն տօներ Յիսուսի Քրիստոսի
Ծնունդն։ Կասեն թէ՝ Հայոց Եկեղե-
ցին կը մերժէ սցն ծօնն և որպէս թէ
չը հաւատար մարմնառութեան Բա-
նին Աստուծոյ։ Սակայն այսպէս չէ ։
Մինչեւ 380 թուականն ամենեւին
Ծննդեան տօն չը կար Արքեւելքի մէջ։

Արրայնիան տեսութիւնն կամ գաղտնաբարն տակաւին կը թագաւորէր Արեւելքի մէջ և կարեւոր չէր համարուեր տօնել Յանասի Քրիստոսի Ծնունդն, որ կատարուած էր անյայտութեան մէջ, այլ արժան կը դատուեր տօնել միոյն փռաւոր Աստուածայայնութիւնի կը յԱրեւմուտա, որովհետեւ ծննդեան օրերն տօնելու հնաւանդ ուղարութիւն կար, այն սովորութեան հետեւութեամբ տօնուեցաւ և Յանասի Քրիստոսի Ծնունդն և այն տեղէն տարսածեցաւ յԱրեւելը :

Ստացյն Հայոց Եկեղեցին իւր նոխնական Արեւելքան սովորութիւնն պահպանելով Յանասի Քրիստոսի Ծնունդն առանձին չը տօնէր, այլ Մըկրտութեան և Աստուածայայայնութեան տօնին հետ մրասն :

Պ. Տրոյիցի պնդեց իւր կարծեաց վերայ թէ Հայոց վարդապետական մաս Մրտութիւնն ցալցած է արարութութե մէջ եւս, ինչպէս յայտ է Առաք Ասպառած երգի որ իշխան յաւելուածէն, որ Հայոց Թբիլիսի գաւանելու իմաստն կ'արտայացաէ.

Ի վերջ Պ. Զելցով դիտեց, որ Պ. Տրոյիցի գրուածքին մէջ զիսչողոկն ասոցուածներ կան ընդդէմ Հայոց Եկեղեցւոյն, որ յարդանաց արձանի Եկեղեցի և պահպանած է Հայուաց Հանգանակն և նախնական ծէները: Իսկ Տրոյիցի գրածներն ՚ի մոսմին ազգայնութեան և քաղաքականութեան տօնութուածքին անհիմն գտաւ, բացարեւով, որ քաղաքականութիւնն մի այն վերջին ժամանակներս սկսաւ մէծ դեր խաղալ ազգաց կենաց մէջ և մինչ չեւ անդամ կրօնին եւս իրեն դարձէք մինել. իսկ նախնի գարուց մէջ կրօնտ կան շահերն անկախ են և հաւատն իւր ինքնակայ նշանակութիւնն ուներ մորդկանց կենաց համար, աշուտ բո-

լորովին քաղաքական շարժ ոռիջներէ:

Պ. Տրոյիցիու որաշոնական երկրորդ ընդդիմաբանն էր Պ. Նիլսիկի, որ յայտնեց թէ տմեն բան հանդամանորէն և յրիւ գրուած չէ Հայոց Եկեղեցւոյն նկատմամբ, օրինակի համար, յիշուած չէ թէ ինչպէս Նիկոն Գերոնտուրեց դաշն կուգէր կառելել Հայոց հետ կրիստոնեական պալատութիւնու ուղարկած Եկեղեցւոյն հետ միայնելու համար և Մխալէ այն տեղեկութիւնն, որ Պ. Տրոյիցի կը պատմէ թէ թէտու Պետքական չերսկին հայրանակ թագերուն մէջ կը ըջէր և նոցա հէտ կը խօսակցէր, վասն զի թէտու, ոչ թէ Հայոց, այլ Հրէից հետ կը խօսակցէր: Անհիմն է այն ուեսութիւնն, զօր Պ. Տրոյիցի յառաջ կը բերէ ՚ի կողմանէ Կիսլրիանս Մետարագովամին, որ Հայոց հերիտիկասութիւնն ամեն հերիտիկասութիւններէ վատմարագոյն կը դասէ, յետոյ յայտնեց, որ ԺԿՇ գարու Ռուսական մի յիշուատակարանի մէջ շատ մանրամասնութիւններ կան Հայոց ծխից նկատմամբ, զօրս եթէ Պ. Տրոյիցի ուշագրութեան առած լիներ, առելի բան կարող էր քաղել:

Պ. Նիլսիկի ընդդէմ Տրոյիցիու յայտնեց՝ որ անհիմն է այն դատողութիւնն, իբր թէ Հայոք մի մատով խացուկնելով՝ ՚ի բնութիւնն գտանեն կ'ուղին ցցց առլ, վասն զի Ռուսական հերձուածներուն մէջ եւս մի մատով խացուկնելու սովորութիւն կոյ, որ մի բնութիւն դառնելու դիմամբ չէ:

Մինչդեռ վիճականութիւնն կը շարունակուէր, մի Հայաղգի եւս, իբրև անուղղակի ընդդիմաբան, յայտնեց որ Պ. Տրոյիցիու գրուածքին մէջ զիւտեղուած Հայոց գաւանութեան ուսմական թարգմանութիւնն ուղիղ չէ: Բայց Պ. Տրոյիցի պատասխանեց թէրեւս թարգմանութիւնն համաձայն

լու լինի հայկական այժմեան քննագրին , բայց ըստ ամենայնի համաձայն է ԺԲ գարու մէջ գրուած Հայոց Հաւատաց դաւանութեան յիշատակարանին (Ներսէս Շնորհալոց Ընդհանրականն Կակնարիէ) : Իսկ Պ. Զելցով յարեց . Հայոցի պարանին գիտողութիւնն այն ժամանակ կրնդունուի , եթէ ապացուցուի որ Հայոց այժմեան կարդացած գաւառնութիւնն հաւատարմառ դցն և ստուգացն է ԺԲ գարու մէջ գրուածէն :

Ամենէն վերջի խօսեցաւ Վասիլի եկալ աւտոգ քահանայն , ըստ համաձայն ընվ Պ. Տրցիցիու այն կարծիքին թէ ուղղուի պէտք է առաջարկել Հայոց , որ միանան Ռուսաց Եկեղեցւոյն : Առաջ որկել պէտք չէ , ասաց քահանայն , բայց ձեռք կսրկառել և օգնել պէտք է : Այս է ձմնապարհն : Յետոյ ուղեց խօսիլ Քրիստոսի բնութեան և անձնաւորութեան վերայ , բայց խօսքն ընդ հատեցաւ :

Թէ առաջին երկու ընդդիմաբանից խօսքերն եւ թէ Պ. Տրցիցիու պատասխաններն կը ծափահարուէին : Պ. Տրցիցի շատ համաւօտ կը պատասխանէր , բայց շատ մեղմէ ցած ձայնիւ , որ ամենուն լսելի չէր լինիր :

Վերջացաւ միցումն եւ Պ. Տրցիցի արժանի գատուեցաւ աստուածաբանութեան վարդապետի աստիճանի ո : Գ01,00 :

Հայոց Եկեղեցւոյ միութեան իրն զրոյն վերայ առաջ Յունաց աստուածաբաններն գլուխ կը պայմեցնէին գարերով : Այժմ , ինչպէս կ'երեւի , այս ժառանգութիւնն Ռուսաց աստուածաբաններուն անցած է , թէեւ Յշնդ եւս իրենց նախահարց երազներու կատարման յուսով , միութեան խնդրոյն վերայ խօսելու որտեհ ասիթներն չ'են թուզուր : Գիտ-

նեկան Ռուս մի տոտուածաբանութեան վարդապետի աստիճան կը փափարի ստանուլ , Հայոց դաւանութեան քննութեամբ կը սկսի իւր աշխատասիրութիւնն եւ երկուց եկեղեցեաց միութեան խնդրով կ'աւարտէ : Աստուածաբանական խնդրոց դաշտէն շուտով քաղաքական խնդրոց դաշտն կ'ինչ : Իւր կ'արծիքներն , թէեւ ընդդիմափառներ կ'ունենան , բայց կը ծափահարութիւնն ակագեմիական կանառէն : Աստուածաբանական քննութեան եւ Հայոց Եկեղեցւոյ միութեան խնդրիր , ինչ յարակցութիւններն իրարու հետ Այս , աստուածաբանութեան վարդապետի աստիճան ստանալու համար , կարելի է Հայոց Եկեղեցւոյ դաւանութիւնն եւ վարդապետութիւնն նիւթ ընտրել , բայց այս մասին Հայոց բոլոր գրաւոր երկասիրութիւնքն , թէ տպեալ եւ թէ անտիպ , ծամելու , մարսելու և ապա ասպարէղ ենելու է : Անհայտգէտ Ռուս մի ինչպէս կարսղ է խղճիւ կատարել այս փափուկ պաշտօնն , քանի որ հատուկուոր և թերի թարգմանութիւններէ ու յունական մոլեուանդութեանէ տարածուած անըստցգ տեղեկութիւններէ զատ՝ ուրիշ ուղեցոց չ'ունի Հայաստանեաց Եկեղեցւոյ գաւանութեան , վարդապետութեան , պանդութեանց կ'արելի է աստուածաբանութեան դօքտորի աստիճան ստանալ Ռուսական Արկադիմայի մէջ , քանի որ բիւրաւոր անգամ կրկնուած բնութեան , խալչշարի , ծննդեան քննի և այլ խնդիրներն քրքրելով կարելի է հանձար փայլեցնել և ծափահարութիւն : Կերեւի թէ , ով որ Հայոց Եկեղեցին Ռուսականին հետ մի-

ացնելու դիւրին և մօասւոր ձանաւագարհները ցոյց ասայ, կարող է ասասւածաբանութեան վարդապետի վկայագիր ստանալ: Այսպիսի վկայագիրներ անտարակցած Ռուսից քաղաքուգէտներն աւելի շուտով կարեն ստահալքան թէ Ակադեմիայի անդամներն:

Մենք կը կարծէինք թէ միայն քաղաքականութե միջնորդութին մէջ կը յուղուի միութե այս խոնդիրն, բայց զըժքադաբար մինչեւ Ակադեմիական առենախօսութեան բեմն եղած է: Զարմանալի է, որ Հայոց հովելներու քնացած ժամանակի Ռուսացաց աստուածականութեան մէջ կը մտածէն նոցա հօտի միրիութեան համար, զոր մի միայն միութեան մէջ կը տեսնեն, այն միութեան, որոյ ողբուղն արդէն կը վայելին Վրացիք, կամաց կամաց կորուսանելով իրենց ազգայնութիւնն ու լեզուն:

Ա՞խ, ինչ սոսկալի բան է, երբ ազգաց դաւանութիւններն քաղաքական միտումներու գործիք գարձնել կը ջանան, երբ չեն թողուր կայսերն՝ կայսեր տալ եւ Աստուծոյն՝ Աստուծոյ, այլ կը նկրտին երկուսն եւս կայսեր տալ, բայց Բնական տռաւել սոսկալի է, երբ տակաւին ազգեր կան, որ իրենց կեանքն կը բարձուի և իրենք քնացած են յիմարութեան, անձնամոռութեան և անքաղաքագիտութեան խոր քնով:

Պ. Տրոյցիկու և իւր ընդդիմանից ոմանց Հայոց Եկեղեցւոյն նկատմամբ ունեցած սիսալ հասկացողութեան դէմ կարելի էր ընդարձակօրէն խօսիլ, բայց աւելորդ կը համարիմք, վասն զի միջնադարեան կրօնական վէճեր յարուցանելու փափաք չունիմք: Հայք հերետիկոս են թէ ուղղագուան, այդ վէճուն ևս մեր Եկեղեցւոյ թշնամիներէն չմք սպասեր, Եւ Բնակու կարեմք սպասել, բանի որ մեր Եկեղեցին դա-

դտիետողներն խաչակնքով մատներու քանակութենէն անգամ հերեափիկութիւն և ուղղագիտութիւն կը հանեն և այնչափ հմտութիւն ունին մեր Եկեղեցւոյ վարդապետութեան և արարողութեանց վերայ, որ տակաւին չք գիտեն թէ մի մատով կը խաչակըն քեն Հայք, թէ երեք:

Այս ամեն իմաստակութիւններն ծնունդ են այն բուռն եռանդին, ոյն անդրուն տքնութեան, որով Հայոց Եկեղեցին միացնել կը տենչան, և միացընելով՝ գոյութիւնն ջնջել եկեղեցեաց շարքէն:

Ավանս, որ Քրիստոնէութիւնն տակաւին այս վիճակին մէջ է: Ավանս, որ տակաւին իրենց մերձաւորի ուղանման հետամուտներն կը համարին թէ պաշտօն կը մատուցանեն Աստուծոյ:

Կ Ռ Ի Ւ

Ի Ն Ե Ա Ռ Ե Զ Ի Թ Ե Ն Ե Ա Ց

Ա. Համբարձման Տօնն Հայք եւ Յանք միասին կը կատարեն Զիթենեաց սարին վերայ: Առաջին օրն իւրաքանչւուր ազգ յատուկ վրան և սեղան կը պատրաստէ յաջորդ աւուր պատարագին համար, իսկ ժամերգութիւնն նցն գիշերն կը կատարուի: Ի վաղուց անտի սովորութիւն կայ, որ Հայք Օրհնութեան շարականն փոքրիկ մատրան մէջ կ'երգեն և Աւետարան կը կարգան: Յանք եւս աղատ են իրենց կարգին որ և իցէ բան կարդալու, վասն վի Մատուռն թէ և Տաճկաց ձեռքն է, բայց Տօնական աւուրց մէջ Քրիստոնէից կը տրուի: